ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-651[1]-27.10.2014,03.11.2014 -ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի՝

1. 2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի աշխատում (չի զբաղեցնում պետական եւ համայնքային պաշտոն, կամ չի կատարում վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից, որպես անհատ ձեռնարկատեր չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ, չի զբաղեցնում նոտարի պաշտոն):».

2. 5-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի չափը» բառերը փոխարինել «սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ)» բառերով, իսկ 4-րդ մասում «մասնագիտական ստաժի» բառերը փոխարինել «հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի» բառերով.

3. 6-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 1-ին կետում «օրվանից, եթե» բառերը փոխարինել «կամ աշխատանքից ազատվելու կամ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից, եթե» բառերով, իսկ 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվում է ոչ ավելի վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:»:

2) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է պետական պաշտոն զբաղեցրած անձի աշխատանքի ընդունվելու (պետական եւ համայնքային պաշտոն զբաղեցնելու կամ վճարովի այլ աշխատանք կատարելու, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից, որպես անհատ ձեռնարկատեր՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, նոտարի պաշտոն զբաղեցնելու) դեպքում, աշխատանքի ընդունվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:»:

4. 9-րդ հոդվածում.

1) 4-րդ մասում «2-րդ հոդվածով» բառերը փոխարինել «5-րդ հոդվածով» բառերով,

2) 5-րդ մասում «6-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերը փոխարինել «2-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 6-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերով,

3) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովում 2014 թվականի նոյեմբերի 19-ին 1-ին ընթերցմամբ ընդունված՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի կապակցությամբ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակա-ցություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասում «3-րդ մասի» բառերից հետո ավելացնել «6-րդ կետում «դատախազ» բառից հետո լրացնել «, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի» բառերով, իսկ» բառերը: Ըստ այդմ, նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառից հետո ավելացնել «և լրացում» բառերը:	Ընդունվել է:	Հստակեցվում է զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու դեպքում կենսաթոշակի իրավունքը դադարեցվելուց հետո կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու դեպքերը (նաև քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատվելու դեպքերում):
ՀՀ կառավարություն	1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ	Ընդունվել է:	Առաջարկության նպատակն է՝ հստակեցնել պետական պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ նշանակելու ժամկետները:

	հոդվածի 2-րդ մասում փոփոխություն նախատեսող՝ հետևյալ դրույթներով *«2-րդ մասի 1-ին կետում «օրվանից, եթե» բառերը փոխարինել «կամ աշխատանքից ազատվելու կամ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից, եթե» բառերով, իսկ 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.* *«Սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվում է ոչ ավելի վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:»:*		
ՀՀ կառավարություն	2. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասը լրացնել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում փոփոխություն նախատեսող՝ հետևյալ դրույթով. *«3) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.* *«Սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել մինչև սույն օրենքն ուժի մեջ*	Ընդունվել է:	Սահմանվում է 2014 թվականի հուլիսի 1-ին դատավորի պաշտոն զբաղեցրած անձին անցումային ռեժիմով նշանակված կենսաթոշակի առավելագույն չափ, ինչը սահմանված է եղել մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ:

	մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:»: Ըստ այդմ, նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով:		
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/	Առաջարկվում է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանել, որ եթե զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի պարգևավճար (կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ) ստանալու իրավունքը դադարեցվել է աշխատելու պատճառով, ապա պարգևավճար ստանալու իրավունքը վերականգնվում է՝ ինքնաշխատ եղանակով՝ անկախ անձի դիմելուց:	Ընդունվել է մասնակի	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքում՝ եթե զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի պարգևավճար (կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ) ստանալու իրավունքը դադարեցվել է աշխատելու պատճառով, ապա պարգևավճար ստանալու իրավունքը վերականգնվում է՝ 1) եթե անձի՝ պարգևավճար ստանալու իրավունքը դադարեցվել է 2014 թվականի հունվարի 1-ից հետո և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ անձի տարիքային աշխատանքային կենսաթոշակ կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստանալու իրավունքը դադարեցված չէ՝ 2015 թվականի հունվարի 1-ից, անկախ դիմելու հանգամանքից, 2) եթե անձի՝ արգևավճար ստանալու իրավունքը դադարել է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա, դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:»: Ըստ այդմ սահմանվում է, որ եթե անձի՝ պարգևավճար ստանալու իրավունքը դադարեցվել է 2014 թվականի հունվարի 1-ից հետո և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ անձի կենսաթոշակ կամ նպաստ

			ստանալու իրավունքը դադարեցված չէ՝ ապա անկախ դիմելու հանգամանքից՝ պարգևավճար ստանալու իրավունքը վերականգնվում է 2015 թվականի հունվարի 1-ից: